ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ 8/1
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi.lori@mta.gov.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ
17-Ի ԵՐՐՈՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 25 անդամներ՝

Նիստը վարում էր Ալավերդի համայնքի ղեկավար Արկադի Թամազյանը:

Նիստին մասնակցում էին Ալավերդի համյանքի ղեկավարի տեղակալներ՝ Ա.Աբելյանը, Ս.Վարդումյանը, համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարներ, համայնքապետարանի աշխատակազմի պատասխանատու աշխատողներ, լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Ժամը 15^{00}-ին նիստը վարողի կողմից ներկայացվեց համայնքի ավագանու նիստի քվորում լինելու վերաբերյալ: Ավագանու նիստը սկսվեց ժամը 15^{04}-ին:

Համայնքի ղեկավարի կողմից ներկայացվեց առաջարկ, ավագանու օրակարգում ներառել «ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՆՎԻՐԱԲԵՐՎՈՂ UAZ ՄԱԿՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ «ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ» և «ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-060-0215-0022, 06-080-0116-0191 և 06-069-0283-0008 ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒՄՆԵՐՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» հարցերը:

1. ԼՍԵՑԻՆ – ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու 2023 թվականի մարտի 17-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

(Զեկ. Ա. Թամազյան)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով ՝

համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Ալավերդի համայնքի ավագանու 2023 թվականի մարտի 17-ի հերթական նիստի օրակարգը՝

1. ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 17-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

(Զեկուցող Ա. Թամազյան)

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՍԱՆԱՀԻՆ ԹԱՂԱՄԱՍԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ

ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՏԱԼՈՒ ՄԱՍՈՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:

(Զեկուցող Ա. Թամազյան)

3. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

(Զեկուցող Ա. Թամազյան)

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2023-2027ԹԹ. ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

(Զեկուցող Ա. Թամազյան)

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՃԱՃԿՈՒՏ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.21455 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

(Զեկուցող Ա. Թամազյան)

6. ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՂՊԱՏ ԳՅՈՒՂԻ 21-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹՎԱՅԻՆ ԱՆՎԱՆԱԿՈՉՄԱՆ ՄԱՍԻՆ:

(Զեկուցող Ա. Թամազյան)

7. ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՆՎԻՐԱԲԵՐՎՈՂ UAZ ՄԱԿՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ «ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող Ա. Թամազյան)

8. ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-060-0215-0022 06-080-0116-0191 06-069-0283-0008 ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒՄՆԵՐՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

(Զեկուցող Ա. Թամազյան)

Որոշումն ընդունվեց. 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

2. ԼՍԵՑԻՆ – Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի մաս կազմող Սանահին թաղամասին բնակավայրի կարգավիճակ տալու հանրային նախաձեռնությանը հավանություն տալու մասին.

(Զեկ. Ա. Թամազյան)

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Հ. Ձավարյանը, Ս.Զախարովը:

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի դրույթները՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Հավանություն տալ Ալավերդի քաղաքի մաս կազմող Սանահին թաղամասին օրենքով բնակավայրի կարգավիճակ տալու վերաբերյալ հանրային նախաձեռնությանը:
2. Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշման հիման վրա կազմել և ավագանու հաստատմանը ներկայացնել ուղերձ, ուղղված Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց. 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

3. ԼՍԵՑԻՆ – Համայնքի ղեկավարին կից կանանց և երիտասարդների խորհրդակցական մարմնի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին.

(Զեկ. Ա. Թամազյան)

Գրանցվողներ չկան:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետի և 35-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի պահանջներով,

հիմք ընդունելով՝ Ալավերդի համայնքի ավագանու կողմից 2022թ. ընդունված «Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 12-Ա որոշման պահանջները

համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել «Համայնքի ղեկավարին կից կանանց և երիտասարդների խորհրդակցական մարմնի ձևավորման և գործունեության կարգը»՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Սահմանել համայնքի ղեկավարին կից կանանց և երիտասարդների խորհրդակցական մարմնի անդամության դիմումի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Որոշումն ընդունվեց. 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

4. ԼՍԵՑԻՆ – Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի 2023-2027 թթ. Հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին

(Զեկ. Ա. Թամազյան)

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Մ.Պեպանյանը, Դ.Ղումաշյանը, Հ. Ձավարյանը, Ա.Սմբատյանը, Հ.Հախվերդյանը, Մ.Մարգարյանը, Ա.Թամազյանը, Ս.Զախարովը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 82-րդ հոդվածով և հաշվի առնելով Ալավերդի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի 2023-2027թթ. հնգամյա զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Որոշումն ընդունվեց. 14 կողմ, 0 դեմ, 11 ձեռնպահ:

5. ԼՍԵՑԻՆ – Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Կաճաճկուտ գյուղի վարչական սահմաններում գտնվող 0,21455 հեկտար մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոխելու մասին

(Զեկ. Ա. Թամազյան)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն, 09.08.2007թ. N 1032-Ն և 02.04.2015թ. N 412-Ն որոշումներով, Հայաստանի Հանրապետության համայնքների ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 22.06.2022թ. N 86 դրական եզրակացությունը՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Կաճաճկուտ գյուղի վարչական տարածքում գտնվող, Արեն Վախթանգի Լալայանի և իր ընտանիքի կողմից 1998-2000թթ. համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այգում ինքնակամ կառուցված բնակելի տունը, իր օժանդակ շինություններով (ծածկագիր՝ 06-054-0115-0001), օրինակացնելու

նպատակով, գյուղատնտեսական նշանակության հողերից 0.21455 հա մակերեսով այգին փոփոխել բնակավայրերի հողեր նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման հողեր գործառնական նշանակության:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից:

Որոշումն ընդունվեց. 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

6. ԼՍԵՑԻՆ – Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Հաղպատ գյուղի 21-րդ փողոցի թվային անվանակոչման մասին

(Զեկ. Ա. Թամազյան)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Ալավերդի համայնքի Հաղպատ գյուղի 21-րդ փողոցն անվանակոչել հետևյալ թվային հաջորդականությամբ.

   1-ին փակուղի (սկսվում է 06-060-0005-0001 կադաստրային ծածկագրի հարավարևմտյան սահմանակետից և ավարտվում 06-060-0005-0002 կադաստրային ծածկագրի հարավային սահմանակետում):

   2-րդ փակուղի (սկսվում է 06-060-0006-0003 կադաստրային ծածկագրի հարավային սահմանակետից և ավարտվում 06-060-0006-0001-002 կադաստրային ծածկագրով շինության արևմտյան մասում):

   3-րդ փակուղի (սկսվում է 06-060-0007-0010 կադաստրային ծածկագրի հարավարևելյան սահմանակետից և ավարտվում 06-060-0007-0008-004 կադաստրային ծածկագրով շինության մոտ):

   1-ին նրբանցքը (սկսվում է 06-060-0007-0001 կադաստրային ծածկագրի հարավային սահմանակետից և ավարտվում է 06-060-0007-0002 հարավարևմտյան սահմանկետում):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց. 25 կողմ, 0 դեմ, ձեռնպահ:

7. ԼՍԵՑԻՆ – Ալավերդի համայնքին նվիրաբերվող UAZ մակնիշի ավտոմեքենան ընդունելու և «Ալավերդու համայնքային կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ին անհատույց օգտագործման տրամադրելու մասին

(Զեկ. Ա. Թամազյան)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 42-րդ ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և Ռաֆիկ Ստեփանի Հարությունյանի դիմումը.

համայնքի ավագանին որոշում է.

1. Ռաֆիկ Ստեփանի Հարությունյանի կողմից Ալավերդի համայնքին նվիրաբերվող UAZ մակնիշի ավտոմեքենան /հաշվառման համարանիշ՝ 37 GL 458, տիպարը՝ 315196, ՏՄ տեսակը՝ թեթև մարդատար, թափքի տեսակը՝ ունիվերսալ, գույնը՝ այսբերգ /սպիտակ/, թողարկման տարեթիվը՝ 2011թ., շարժիչի հզորությունը /ԿՎՏ/Ձ.ՈՒ.՝ 83/113, գրանցման համար՝ XH722508, գրանցման ամսաթիվ՝ 03.06.2022թ./ ընդունել, հաշվառել համայնքապետարանի հիմնական միջոցների գույքի ցանկում և անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Ալավերդու համայնքային կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց. 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

8. ԼՍԵՑԻՆ – Ալավերդի համայնքի վարչական տարածքում գտնվող 06-060-0215-0022, 06-080-0116-0191, 06-069-0283-0008 ծածկագրերով հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունները փոխելու մասին

(Զեկ. Ա. Թամազյան)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով, հաշվի առնելով «Էլեկտրամատակարարման հուսալիություն» ծրագրի շրջանակներում «Նոյեմբերյան» և «Լալվար» 110 կՎ ԷՀՕԳ փոխարինման՝ բարձրավոլտ էլեկտրական հենասյուների տեղակայման և սպասարկման նպատակով Ալավերդի համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու անհրաժեշտությունը, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» 14.03.2023թ. N 24 եզրակացությունը՝

համայնքի ավագանին որոշում է.

1. ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի, Հաղպատ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 06-060-0215-0022 ծածկագրով, 0.0102 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողի հողատեսքի, 0.0102 հա մակերեսով

հողամասի, Նեղոց բնակավայրի վարչական տարածքում գտնվող 06-080-0116-0191 ծածկագրով, 0.00929 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարքի և Ճոճկան բնակավայրի վարչական տարածքում գտնվող 06-069-0283-0008 ծածկագրով, 0.00942 հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողի հողատեսքի հողամասի նպատակային նշանակությունները փոխել՝ էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նպատակային նշանակության՝ էներգետիկայի հողեր գործառնական նշանակության հողամասերի:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Որոշումն ընդունվեց. 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Ավագանու նիստը հեռարձակվել են առցանց, տեսանկարահանվել և էլ. կրիչով պահպանվում են համայնքապետարանի աշխատակազմում:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

1. ԹԱՄԱՋՅԱՆ ԱՐԿԱԴԻ ՍԱՄՎԵԼԻ
2. ՊԱՊՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ ԱԼԲԵՐՏԻ
3. ԶԱԽԱՐՈՎ ՍԻՄՈՆ ԳԵՈՐԳԻԵՎԻՉ
4. ԹՈՐՈՍՅԱՆ ՆԱՐԻՆԵ ՀԵՆՐԻԿԻ
5. ԹԱՄԱՋՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ՍԵՐՅՈԺԱՅԻ
6. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ ՍԱՐԳՍԻ
7. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ ԻՍՊԻՐԻ
8. ՏԻՏԱՆՅԱՆ ԱԲԵԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ
9. ԱԼԼԱՀՎԵՐԴՅԱՆ ԳԱՅԱՆԵ ՍԵՅՐԱՆԻ
10. ՌԱՄԱՋՅԱՆ ՄԱՆՎԵԼ ՍԱՐԻԲԵԿԻ
11. ՎԱՐՈՍՅԱՆ ԹԱԳՈՒՀԻ ՄԵԽԱԿԻ
12. ՉԵՐՉԻՆՅԱՆ ՍԵՆԻԿ ՍՈՒՐԵՆԻ
13. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ԼԱՈՒՐԱ ԼՈՒՍԱԿԻ
14. ՌԱՄԱՋՅԱՆ ԱՐԱՄ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ
15. ՂՈՒՄԱՇՅԱՆ ԴԱՎԻԹ ԳԵՂԱՄԻ
16. ՍԱՐԳՍՅԱՆ ԼՈՐԱ ՆՈՐԱՅՐԻ
17. ՁԱՎԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱԼԲԵՐՏԻ
18. ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ ՖԼՈՐԱ ՎԱՆՈՅԻ

19. ՍՄԲԱՏՅԱՆ ԱՆԱՀԻՏ ԱՐՇԱՎԻՐԻ _____

20. ԴԱԼԼԱՔՅԱՆ ԱՐԵՆ ԱԼԲԵՐՏԻ _____

21. ՋԱՆԻՆՅԱՆ ԱՄՐԱՍՏԱՆ ՌԱՖԻԿԻ _____

22. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՀՐԱՆՏ ԱԼԲԵՐՏԻ _____

23. ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ ԱԼԲԵՐՏԻ _____

24. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐՏԱԿ ԼԵՎՈՆԻ _____

25. ՊԵՊԱՆՅԱՆ ՄԱՐԻԱՆՆԱ ԳԱԳԻԿԻ _____

ՆԻՍՏՆ ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝ **ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԳԱԼՍՏՅԱՆ**

ՀԱՇՎԱՌՈՒՄ

2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 17-ԻՆ ԺԱՄԸ 15^{00}-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՆԻՍՏԻՆ ԱԼԱՎԵՐԴԻ ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԸՆՏՐՎԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ			ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
1.	Ղումաշյան	Դավիթ	Գեղամի	
2.	Սարգսյան	Լորա	Նորայրի	
3.	Ղուլյան	Համլետ	Սերյոժայի	
4.	Երիցյան	Արմինե	Ժորայի	
5.	Մարգարյան	Մկրտիչ	Ալբերտի	
6.	Ձավարյան	Հարություն	Ալբերտի	
7.	Թաթուխաշվիլի	Ֆլորա	Վանոյի	
8.	Ջանինյան	Ամրաստան	Ռաֆիկի	
9.	Հախվերդյան	Հրանտ	Հրահատի	
10.	Սմբատյան	Անահիտ	Արշավիրի	
11.	Գևորգյան	Արտակ	Լևոնի	
12.	Դալլաքյան	Արեն	Ալբերտի	
13.	Պեպանյան	Մարիաննա	Գագիկի	